ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ՄԱՐՏԻՆ ԱՐՄԱՆԻ

# ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀՀ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ – 2025

---

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АГАДЖАНЯН МАРТИН АРМАНОВИЧ

# ПРЕДПОСЫЛКИ РЕФОРМИРОВАНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ СОЦИАЛЬНОЙ ПОЛИТИКИ В АРМЕНИИ: ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ЕДИНОЙ СОЦИАЛЬНОЙ СЛУЖБЫ РА В КАЧЕСТВЕ ОСНОВЫ РЕФОРМ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”

**АВТОРЕФЕРАТ**

ЕРЕВАН-2025

Ատենախոսության թեման հաստատվել է **Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտությունների դոկտոր **Ալեքսանյան Աշոտ Սեյրանի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտությունների դոկտոր **Քոչարյան Տիգրան Տոնիկի**
քաղաքական գիտությունների թեկնածու **Մնացականյան Անժելա Սուրենի**
Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ պետական կառավարման ակադեմիա**

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի մայիսի 21-ին, ժամը 14:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2025 թվականի ապրիլի 18-ին:

ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ **Մարգսյան Առնակ Գեորգիի**

---

Тема диссертации утверждена в **Ереванском государственном университете**
Научный руководитель:
доктор политических наук **Алексанян Ашот Сейранович**

Официальные оппоненты:
доктор политических наук **Кочарян Тигран Тоникович**
кандидат политических наук **Мнацаканян Анжела Суреновна**
Ведущая организация: **Академия государственного управления РА**

Защита состоится 21 мая 2025 г. в 14:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА. Адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.
Автореферат разослан 18 апреля 2025г.

Научный секретарь
специализированного совета 056 МОНКС КВОН РА,
кандидат политических наук, доцент **Саргсян Арнак Георгиевич**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության և ռազմավարական զարգացման առանցքային ուղղություններից մեկը սոցիալական պաշտպանության համակարգի արդիականացումն է, ինչը մեծապես պայմանավորված է երկրի առջև ծառացած սոցիալ-տնտեսական բնույթի մարտահրավերներով:[1] Մասնավորապես, COVID-19 համավարակը, 44-օրյա պատերազմը, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված շուրջ 115 հազար անձանց գաղթը դեպի Հայաստան,[2] ինչպես նաև այլ աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումները հրատապ դարձրին սոցիալական ոլորտի համակարգային բարեփոխումների անհրաժեշտությունը, որը կնպաստի սոցիալական ծառայությունների հասանելիության բարելավմանը և խոցելի խմբերի աճող կարիքների հասցեագրմանը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետությունը պայմանավորված է նախ և առաջ մեկ միասնական և թվային տեխնոլոգիաներով հագեցած հարթակի առկայությամբ:[3] Այս համատեքստում Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ նաև՝ ՄՍԾ) ներդրումը կարևոր նախաձեռնություն է, որի ռազմավարական նպատակն է կենտրոնացնել սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը, նվազեցնել դրանց մասնատվածությունը և ապահովել ռեսուրսների առավել արդյունավետ բաշխումը:[4] ՄՍԾ-ի ներդրումը նաև համահունչ է Հայաստանի հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության նպատակներին, որտեղ նշվում է հանրային ծառայությունները նորարար, մարդակենտրոն, արդար և օպտիմալ դարձնելու հրամայականը:[5]

---

[1] ՀՀ կառավարություն. ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր. N 1363 - Ա որոշման հավելված. 18 Օգոստոսի 2021. էջեր 67-68. https://www.gov.am/files/docs/4586.pdf (մուտք է գործվել 26.04.2024):

[2] UNHCR. "Armenia Refugee Situation Overview." UNHCR Data Portal, https://data.unhcr.org/en/country/arm. (Accessed: 20.09.2024).

[3] Capuani, F. "Enhancing Social Services through Digitalisation." European Social Network, 2024, www.esn-eu.org/news/enhancing-social-services-through-digitalisation. (Accessed: 21.08.2024).

[4] Միասնական սոցիալական ծառայության պաշտոնական կայքէջ. «Մեր մասին». https://socservice.am/about-us (մուտք է գործվել 20.08.2024):

[5] ՀՀ կառավարություն. ՀՀ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարություն. N 691-Լ որոշում-Հավելված N 1. 13 Մայիսի 2022. https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2022/691_1.pdf (մուտք է գործվել 19.03.2024):

Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ առայսօր ՄՍԾ-ի գործարկումից ավելի քան երեք տարի անց, գիտական գրականության մեջ դեռևս առկա չեն սոցն կառույցի գործունեության արդյունավետության վերաբերյալ համալիր ուսումնասիրություններ:

ՄՍԾ-ի ներդրման գործընթացի վերլուծությունն ու գնահատումը կենսական նշանակություն ունեն. դրանք հնարավորություն են տալիս բացահայտել կառույցի իրական կարողությունները արձագանքելու ներկայիս մարտահրավերներին: Արդյունավետության գնահատման նպատակն է վերհանել, թե որքանով է տվյալ կառույցի գործունեությունը համապատասխանում սոցիալական պաշտպանության համակարգերի արդիականացման ու զարգացման միտումներին: Վերլուծության ընթացքում վեր են հանվել ոչ միայն ՄՍԾ-ին առնչվող հիմնական մարտահրավերները, ինչպիսիք են տեխնոլոգիական ենթակառուցվածքի թերզարգացվածությունը, մարդկային ռեսուրսների սահմանափակությունը և սոցիալական աշխատանքի ու զբաղվածության ծրագրերին առնչվող խնդիրները, այլև ուղենշվել են ապագա բարեփոխումների ռազմավարական ուղղությունները, որոնք կամրապնդեն ՄՍԾ-ի դերը սոցիալական ծառայությունների տրամադրման ոլորտում և կնպաստեն սոցիալական պաշտպանության համակարգի կայուն զարգացմանը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության նպատակն է համապարփակ գնահատել Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի մաս հանդիսացող Միասնական սոցիալական ծառայության արդյունավետությունը սոցիալ-տնտեսական փոփոխվող պայմաններում վերհանելով ՄՍԾ-ի գործունեության հիմնական թերությունները և սահմանելով բարելավման հիմնական ուղղությունները:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար հետազոտության շրջանակում սահմանվել և լուծվել են հետևյալ *խնդիրները*.

- **ուսումնասիրել** սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական սահմանումները, նպատակները, սկզբունքներն ու գործառույթները,
- **ներկայացնել** սոցիալական պաշտպանություն հայեցակարգի տեսական հիմքերը,
- **հետազոտել** կենտրոնացված կառույցների դերը, դրանց ազդեցությունը ծառայությունների հասանելիության և կառավարման արդյունավետության վրա,
- **ուսումնասիրել** ՄՍԾ-ի ներդրման գործընթացները, ինչպես նաև համապատասխան օրենսդրական և ռազմավարական փաստաթղթերը,

- **կատարել** ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտը կարգավորող փաստաթղթերի համալիր վերլուծություն,
- **իրագործել** ընդունարանների աշխատանքի գնահատում հիմնված շահառուների սպասարկման գործընթացների ուսումնասիրության վրա,
- **գնահատել** սոցիալական աշխատանքի, մասնավորապես դեպքի վարման գործընթացի կառավարման և զբաղվածության ծրագրերի արդյունավետությունը,
- **բացահայտել** ինտեգրված տեղեկատվական համակարգերի դերը և դրանց ներդրման անհրաժեշտությունը,
- **վերլուծել** ՄՍԾ-ի մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացները:

**Հետազոտության առարկան և օբյեկտը:** Հետազոտության *առարկան* սոցիալական պաշտպանության ոլորտն է, իսկ հետազոտության *օբյեկտը* ՀՀ միասնական սոցիալական ծառայության որպես պետական սոցիալական քաղաքականություն իրականացնող հիմնական դերակատարի գործունեության արդյունավետությունն է:

**Հետազոտական հարցը և վարկածները:** Ելնելով հետազոտության որակական բնույթից հետազոտության հարցի սահմանման համար կիրառվել է համակցված հարցի տեսակը միավորելով գնահատողական և բացահայտողական հարցերի տեսակները, իսկ ինչ վերաբերում է վարկածներին, ապա հեղինակը դիմել է երկաստիճան մոտեցման:[6] Առաջին կամ հիմնական վարկածն անդրադառնում է համակարգային և գործառնական հիմնահարցերին, մինչդեռ երկրորդ կամ աջակից վարկածը առավել խորքային հարցադրում է առաջ քաշում նեղացնելով հետազոտության շրջանակը: Ուստի, առաջադրվել են հետևյալ հարցը և վարկածները.

- ***Հետազոտական հարց.*** Ինչպե՞ս է գործում ու ո՞րն է ՄՍԾ-ի դերը ՀՀ պետական սոցիալական քաղաքականության համատեքստում, և որո՞նք են հիմնական համակարգային և գործառնական մարտահրավերները, որոնք խոչընդոտում են ՄՍԾ-ի արդյունավետ ծառայություններ տրամադրելու կարողությանը:
- ***Հետազոտական վարկածներ.***
    - Հիմնական վարկած. Կազմակերպչական, համակարգային և գործառնական թույլ կառուցակարգերը խոչընդոտում են ՄՍԾ-ի արդյունավետությանը

[6] Barroga, E., and Glafera, J. M. "A Practical Guide to Writing Quantitative and Qualitative Research Questions and Hypotheses in Scholarly Articles." Journal of Korean Medical Science, 2022, doi:10.3346/jkms.2022.37.e121.

համապարփակ սոցիալական ծառայությունների տրամադրման գործում:

- Աջակից վարկած. Մարդկային ռեսուրսների անարդյունավետ կառավարումը, Ընդունարանի գործընթացների, սոցիալական աշխատանքի ու զբաղվածության ծրագրերի հետ կապված խնդիրները, ինչպես նաև ամբողջապես ինտեգրված տեղեկատվական համակարգերի բացակայությունը բացասաբար են ներազդում ՄՍԾ-ի կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի վրա:

**Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը:** Ատենախոսության տեսական հիմքը պայմանավորված է հետազոտության առարկայի բազմակողմանի վերլուծության անհրաժեշտությամբ, որը ներառում է ՄՍԾ-ի տարբեր բաղադրիչների և դրանց կիրառման առանձնահատկությունների քննությունը:

Մեթոդաբանական առումով ատենախոսությունում հիմնականում կիրառվել են որակական հետազոտության մեթոդներ՝ ապահովելով տվյալների հավաքման և վերլուծության բազմակողմանի մոտեցումը: Որակական հետազոտության մեթոդների կիրառման նպատակահարմարությունը պայմանավորված է ՄՍԾ-ի ներքին գործընթացների վերաբերյալ քանակական տվյալների սահմանափակությամբ: Հիմնական մեթոդները ներառում են փաստաթղթերի վերլուծությունը և խորին հարցազրույցները:

- **Փաստաթղթերի վերլուծություն.** Փաստաթղթերի վերլուծության շրջանակներում ուսումնասիրվել են սոցիալական պաշտպանության ոլորտի միջազգային և ազգային իրավական ու ռազմավարական փաստաթղթերը, վերլուծվել են նաև Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի գործունեությանը վերաբերող հաշվետվություններ և տվյալներ: Տվյալ մեթոդի միջոցով բացահայտվել են սոցիալական պաշտպանության համակարգի կառուցվածքային և գործառնական առանձնահատկությունները:
- **Խորին հարցազրույցներ.** Հետազոտության շրջանակներում իրականացվել է 20 խորին հարցազրույց սոցիալական ոլորտի փորձագետների հետ: Հարցազրույցների ժամանակ կիրառվել է կիսակառուցվածքային հարցման մոտեցումը, երբ հարցաթերթը ներառում է ոչ միայն բաց հարցադրումներ, այլ նաև հնարավորություն է տալիս լայնորեն քննարկելու կոնկրետ խնդիրներ և լուծումներ: Մասնակիցների ընտրությունը կատարվել է տիպային ընտրանքի միջոցով՝ հաշվի առնելով նրանց

փորձն ու գիտելիքները ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ: Հարցազրույցների թիվը սահմանվել է առաջնորդվելով հագեցվածության կետի հասնելու սկզբունքով, այսինքն հարցազրույցների ընթացքում նոր տվյալների և օրինաչափությունների կրկնվելու աստիճանով: Հարցազրույցների նախապատրաստման համար կազմվել է հարցաթերթ, որը ենթարկվել է փորձարկման (պիլոտավորման). առաջին երկու հարցազրույցների արդյունքում հարցաթերթում կատարվել են անհրաժեշտ ճշգրտումներ հստակեցնելով հարցադրումների ձևակերպումները:

Հավաքված որակական տվյալների վերլուծությունը կատարվել է օրինաչափությունների և ընդհանուր թեմատիկ միտումների արձանագրման միջոցով կիրառելով թեմատիկ և բովանդակային (content analysis) վերլուծության մեթոդները: Այս մոտեցումը հնարավորություն է տվել բացահայտել ՄՍԾ համակարգի առջև ծառացած մարտահրավերները և արդյունավետության բարելավման ուղղությունները հիմնվելով որակական տվյալների վրա:

Որակական տվյալներից զատ ատենախոսության շրջանակում գործածվել են նաև պաշտոնական վիճակագրական տվյալներ ստացված Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեից (ArmStat): Այս տվյալները հնարավորություն են տվել կազմել նկարագրական վիճակագրական գծապատկերներ, որոնք արտացոլում են ՀՀ սոցիալական քաղաքականության ոլորտում առկա հիմնական միտումները և փոփոխությունները:

**Թեմայի գիտական մշակվածության աստիճանը**: Սոցիալական պաշտպանությունը և պետական սոցիալական քաղաքականությունը հիմնարար հայեցակարգեր են, որոնք նախատեսված են նվազեցնելու աղքատությունը, անհավասարությունը և սոցիալական ռիսկերը հավաքական միջամտության և համակարգված աջակցության միջոցով: Ի սկզբանե ի հայտ գալով Արդյունաբերական հեղաշրջման ժամանակ այս հասկացությունները զգալիորեն զարգացել են սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և գաղափարական փոփոխությունների ազդեցության ներքո:

«Սոցիալական պաշտպանությունը» հանրային գործողությունների և մասնավոր նախաձեռնությունների համախումբ է ուղղված անհատներին սոցիալ-տնտեսական դժվարություններից պաշտպանելուն: Այն իր մեջ է ընդգրկում սոցիալական ապահովության, սոցիալական աջակցության և աշխատաշուկայի միջամտության քաղաքականություններ ապահովելով նվազագույն կենսամակարդակ և սոցիալական համախմբվածություն:

«Պետական սոցիալական քաղաքականությունը» պետության կանխամտածված միջամտություններն են՝ ուղղված բարեկեցության վերաբաշխմանը, խոցելի խմբերի աջակցությանը և սոցիալական արդարության խթանմանը: Պատմականորեն սոցիալական քաղաքականությունը ձևավորվել է Բիսմարկի սոցիալական ապահովագրության մոդելի արդյունքում Գերմանիայում (1880-ականներ)՝ շեշտը դնելով զբաղվածության հետ կապված ներդրումային համակարգերի վրա: Այս մոտեցումը հակադրվում է ավելի ուշ Բևերիջի մոդելին (1942 թ.), որը մշակվել է Մեծ Բրիտանիայում և ենթադրում էր սոցիալական ծառայությունների համընդհանուր հասանելիություն և համապարփակ սփռվածություն՝ անկախ աշխատանքային կարգավիճակից:

Վերոնշյալ հասկացությունների հիմնական փոխակերպումները տեղի են ունեցել հետևյալ հերթականությամբ՝

- *Բարեգործությունից մինչև իրավունքների վրա հիմնված մոտեցումներ.* ի սկզբանե առաջնորդվելով բարեգործական նախաձեռնության տրամաբանությամբ՝ սոցիալական պաշտպանությունը վերափոխվեց իրավունքների վրա հիմնված մոտեցման Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից հետո (1948 թ.), երբ սոցիալական ապահովությունը ամրագրվեց որպես հիմնարար իրավունք:[7]
- *Սոցիալական պետության կայացում.* Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո քեյնսյան տնտեսագիտությունը որակապես ներազդեց սոցիալական պետության կայացման վրա՝ ողջ Եվրոպայում՝ առաջնահերթություն տալով լրիվ զբաղվածությանը, եկամտի ապահովությանը և սոցիալական պաշտպանության արդար համակարգերին:[8, 9, 10]
- *Նեոլիբերալ ձևափոխություն.* ի դեմս Միլթոն Ֆրիդմանի և Ֆրիդրիխ Հայեկի՝ բազմաթիվ նեոլիբերալ տնտեսագետներ քննադատում էին համընդհանուր բարեկեցության քաղաքականությունը: Նրանք կողմ էին պետական նվազագույն

---

[7] United Nations. "Universal Declaration of Human Rights." UN General Assembly Resolution 217A, 1948.

[8] Keynes, J. M. "The End of Laissez-Faire." Harcourt, Brace, and Howe, New York, 1926.

[9] Esping-Andersen, G. "The Three Worlds of Welfare Capitalism." Princeton University Press, 1990.

[10] Titmuss, R. M. "Essays on the Welfare State." Allen & Unwin, London, 1958.

միջամտությանը, մասնավորեցմանը և անհատական պատասխանատվության գաղափարին:[11, 12, 13]

- *Ժամանակակից ներառական մոտեցումներ.* Ժամանակակից պետական սոցիալական քաղաքականությունները կենտրոնանում են ներառական աճի, սոցիալական ներդրումների և աշխատաշուկայի ակտիվ քաղաքականության վրա՝ շեշտը դնելով կարողությունների զարգացման և ավելի շուտ կանխարգելիչ, քան ռեակտիվ միջոցառումների վրա:[14, 15]

Սոցն գաղափարական քննարկումների առաջնագծում են կանգնած այնպիսի ականավոր գիտնականներ ու տեսաբաններ, ինչպիսիք են Օտտո ֆոն Բիսմարկը (1815-1898 թթ.),[16] Ու. Բևերիջը (1879-1963 թթ.),[17] Թ. Հ. Մարշալը (1893-1981 թթ.),[18] Ա. Սենը (ծն. 1933 թ.)[19] ևն:

Ժամանակակից գրականության մեջ գիտական բանավեճը մեծապես ծավալվում է սոցիալական պաշտպանության համակարգերի կայունության, արդյունավետության, թվային փոխակերպման և հարմարվողական կարողությունների շուրջ՝ ի դեմս գլոբալ մարտահրավերների, ինչպիսիք են ժողովրդագրական ծերացումը, տեխնոլոգիական անհամաչափ զարգացվածությունը, միգրացիան և

---

[11] Friedman, M. "Capitalism and Freedom." University of Chicago Press, 1962.

[12] Hayek, F. A. "The Road to Serfdom." Routledge, London, 1944.

[13] Harvey, D. "A Brief History of Neoliberalism." Oxford University Press, 2005.

[14] Giddens, A. "The Third Way: The Renewal of Social Democracy." Polity Press, Cambridge, 1998.

[15] Hemerijck, A. "Changing Welfare States." Oxford University Press, 2013.

[16] Bismarck, O. "The Kaiser vs. Bismarck: Suppressed Letters by the Kaiser and New Chapters from the Autobiography of the Iron Chancellor." Translated by Bernard Miall, Harper & Brothers Publishers, 1921.

[17] Beveridge, W. "Social Insurance and Allied Services (The Beveridge Report)." His Majesty's Stationery Office, London, 1942.

[18] Marshall, T. H. "Citizenship and Social Class and Other Essays." Cambridge University Press, 1950, pp. 1–85.

[19] Sen, A. "Development as Freedom." Oxford University Press, 1999.

տնտեսական անկայունությունը (Ք. Մրքֆեյթ, Ն. Մորել, Ա. Ատկինսոն, Վ. Բարկա):[20, 21, 22, 23]

**Ատենախոսության գիտական նորույթը:** Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է ՄՍԾ-ի համալիր վերլուծությամբ: Աշխատության մեջ առաջին անգամ ուսումնասիրվում են ՄՍԾ-ի կառուցվածքային և գործառնական առանձնահատկությունները միասնաբար, ինչը հնարավորություն է տալիս համապարփակ գնահատել դրա արդյունավետությունը: Ատենախոսությունն առանձնանում է սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում առկա կոնկրետ խնդիրների բացահայտմամբ և ապացուցահեն առաջարկությունների ներկայացմամբ: Տվյալ ատենախոսությունը առաջարկում է նոր մոտեցում ՄՍԾ-ի գործունեության արդյունավետության և ներառականության բարձրացման համար կարևոր ներդրում կատարելով ինչպես ազգային քաղաքականության մշակման, այնպես էլ հանրային կառավարման բարեփոխումների ոլորտում:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:** Ատենախոսության տեսական նշանակությունը պայմանավորված է սոցիալական պաշտպանության ոլորտի և պետական սոցիալական քաղաքականության ուսումնասիրության շրջանակներում Միասնական սոցիալական ծառայության կառավարման, կառուցվածքային և գործառնական առանձնահատկությունների մասին գիտական գիտելիքի համալրմամբ: Աշխատության մեջ առաջին անգամ ուսումնասիրվել է կենտրոնացված սոցիալական կառույցների արդյունավետությունը ՀՀ սոցիալական քաղաքականության համատեքստում: Այդպիսով, հետազոտությունն ընդլայնում է սոցիալական ծառայությունների տրամադրման տեսական շրջանակը առաջարկելով նոր մոտեցումներ սոցիալական պաշտպանության տեսության և պրակտիկայի համադրման համար, որը կարող է հիմք լինել ոլորտի հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Գործնական նշանակությունը ատենախոսության արդյունքների ՄՍԾ-ի բարեփոխումների և զարգացման գործընթացներում ուղղակիորեն կիրառվելու մեջ է: Աշխատությունը տրամադրում է հստակ

---

[20] McFate, K., et al. "Poverty, Inequality, and the Future of Social Policy: Western States in the New World Order." Russell Sage Foundation, 1996.

[21] Morel, N., Palier, B., and Palme, J. (eds.). "Towards a Social Investment Welfare State? Ideas, Policies and Challenges." Policy Press, Bristol, 2012.

[22] Atkinson, A. B. "Inequality: What Can Be Done?" Harvard University Press, 2015.

[23] Barca, V. "Integrating Data and Information Management for Social Protection: Social Registries and Integrated Beneficiary Registries." Canberra: Commonwealth of Australia, Department of Foreign Affairs and Trade, 2017, ISBN: 978-1-74322-359-8.

առաջարկություններ, որոնք կարող են աջակցել ՄՄԾ-ի կառավարման և ծառայությունների տրամադրման գործընթացների բարելավմանը՝ նպաստելով սոցիալական պաշտպանության համակարգի առավել արդյունավետ և հասցեական գործառույթների իրականացմանը: Այս ուսումնասիրությունն արժեքավոր ներդրում է նաև սոցիալական քաղաքականության մշակման և հանրային կառավարման համակարգի կատարելագործման առումով՝ տրամադրելով տվյալահեն լուծումներ Հայաստանի սոցիալական քաղաքականության ոլորտի մարտահրավերների հաղթահարման համար:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 7 գիտական հոդվածներում, որոնք տպագրվել են ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական պարբերականներում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացության ու առաջարկությունների հատվածից, օգտագործված գրականության ցանկից ու մեկ հավելվածից: Թեկնածուական ատենախոսության տեքստային ծավալը, ներառյալ՝ օգտագործված գրականության ցանկը, 162 էջ է:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ներածությունը հիմնավորում է թեմայի արդիականությունը ներկայացնելով ՀՀ պետական սոցիալական քաղաքականության բարեփոխման անհրաժեշտությունն ու Միասնական սոցիալական ծառայության ներդրման հրամայականները: Սահմանվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, թեմայի գիտական մշակվածությունը, առարկան ու օբյեկտը, հետազոտության տեսամեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, ինչպես նաև տեսական ու կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից, որոնց կառուցվածքը և բովանդակությունը նպատակ ունեն համապարփակ վերլուծելու պետական սոցիալական քաղաքականության ու սոցիալական պաշտպանության համակարգի տեսական հիմքերը և Միասնական սոցիալական ծառայության որպես սոցիալական քաղաքականություն իրականացնողի գործունեության արդյունավետությունը սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում:

Աշխատանքի առաջին գլուխը նվիրված է սոցիալական պաշտպանության համակարգի տեսական հիմքերի ուսումնասիրությանը: **«Սոցիալական պաշտպանության տեսամեթոդաբանական հիմքերը»** վերատառությամբ սույն գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից: Սույն գլխի նպատակը սոցիալական պաշտպանության տեսամեթոդաբանական հիմքերի համակողմանի ուսումնասիրությունն է, որը ուղենիշ և հիմք է սոցիալական քաղաքականության ըմբռնման և մեկնաբանման համար:

Առաջին գլխի առաջին **«Սոցիալական պաշտպանության հիմնական սահմանումները, նպատակները, սկզբունքները և գործառույթները»** ենթագլխում ուսումնասիրվում է սոցիալական պաշտպանություն եզրույթի զարգացումը, ինչպես նաև տվյալ եզրույթի գիտական գրականության մեջ և միջազգային կազմակերպությունների կողմից նշվող սահմանումները: Քննարկվում են նաև սոցիալական քաղաքականություն և սոցիալական պաշտպանություն եզրույթները: Արդյունքը սոցիալական պաշտպանության համապարփակ սահմանման ձևակերպումն է, որը հաշվի է առնում դրա գործառնական և ռազմավարական տարրերը: Տվյալ ենթագլուխը նաև վերլուծում է սոցիալական պաշտպանության նպատակները, սկզբունքները և գործառույթները անդրադառնալով դրանց կիրառական նշանակությանը սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում:

Առաջին գլխի երկրորդ **«Սոցիալական պաշտպանության տեսական հիմքերը»** ենթագլխում ներկայացվում է սոցիալական քաղաքականության և սոցիալական պաշտպանության գիտատեսական վերլուծության համար

երկխումբ մոտեցումը, որը թույլ է տալիս համալիր պատկերացում կազմել սոցիալական պաշտպանության տարբեր գործոնների վերաբերյալ: Խոսվում է նաև համապարփակ կամ հոլիստիկ մոտեցման մասին: Այս մոտեցումների դիտանկյունից ուսումնասիրվում են սոցիալական պաշտպանության ոլորտի տարբեր մակարդակներում տեղի ունեցող երևույթների ու իրադարձությունների էությունը և առանձնահատկությունները:

Առաջին գլխի երրորդ **«Սոցիալական ծառայություններ տրամադրող կենտրոնացված կառույցների դերը սոցիալական պաշտպանության համակարգում»** ենթագլխում ներկայացվում են սոցիալական ծառայություններ տրամադրող կենտրոնացված կառույցների առանձնահատկությունները, մարտահրավերները և դրանց դերը սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետության բարձրացման գործում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՄՍԾ-ի օրինակին: ՄՍԾ-ի առանձնահատկությունների խորքային և որակական ուսումնասիրությունը սույն ենթագլխում հիմք է ՄՍԾ-ի գործունեության արդյունավետության գնահատման համար:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի նկարագիրը և ռազմավարական բարեփոխումները»** վերնագրով, անդրադառնում է Հայաստանի Հանրապետության սոցիալական քաղաքականության կառուցվածքային առանձնահատկություններին և ռազմավարական բարեփոխումներին: Հատուկ ուշադրություն է դարձվում ՄՍԾ-ի ներդրման գործընթացին, դրա դերին և նշանակությանը ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգում: Այս գլխում վերլուծվում են ինտեգրված սոցիալական ծառայության համակարգի ներդրման ռազմավարական բարեփոխումները, ՄՍԾ-ի դերը սոցիալական պաշտպանության ազգային համակարգում, ինչպես նաև ՀՀ-ում սոցիալական պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրահիրավական փաստաթղթերը:

Երկրորդ գլխի առաջին **«ՀՀ սոցիալական քաղաքականության կառուցվածքային առանձնահատկությունները»** ենթագլուխը ներկայացնում է ՀՀ սոցիալական քաղաքականության հիմնական բաղադրիչներն ու դերակատարներին: Նշվում է, որ չնայած սոցիալ-տնտեսական մարտահրավերներին՝ ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգը շարունակաբար զարգանում է, իսկ բարեփոխումները օգնում են բարձրացնել համակարգի կայունությունը և ընդլայնել տրամադրվող ծառայությունների շրջանակը:

Երկրորդ գլխի երկրորդ՝ **«ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգը կառավարող օրենսդրահիրավական փաստաթղթերի վերլուծություն»** ենթագլխում գնահատվում է սոցիալական

պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրական և իրավական փաստաթղթերի ազդեցությունը համակարգի կայացման և զարգացման վրա: Խնդրո առարկա օրենսդրահիրավական փաստաթղթերը նախանշում են ՀՀ սոցիալական քաղաքականության բարեփոխման և զարգացման տեսլականը, ինչպես նաև կարևոր դեր են խաղում ՄՍԾ-ի գործունեության երկարաժամկետ պլանավորման և կազմակերպման գործում: Բացի ոլորտը կարգավորող օրենքներից և որոշումներից, թվարկվում են նաև ՄՍԾ-ի գործունեությանը սերտորեն առնչվող ռազմավարական բնույթի մի շարք կարևոր փաստաթղթեր, օրինակ՝ ՀՀ կառավարության ծրագիրը, ՀՀ աշխատանքի և սոցիալական պաշտպանության 2022-2026 թվականների ռազմավարությունը, ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, Հայաստանի վերափոխման ռազմավարությունը ևն:

Երկրորդ գլխի երրորդ **«ՀՀ-ում ինտեգրված սոցիալական ծառայության համակարգի ներդրման ռազմավարական բարեփոխումները»** ենթագլխում ուսումնասիրվում են ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման առանձնահատկությունները անդրադառնալով ոլորտի ռազմավարական նշանակության նախաձեռնությունների հիմնարար նպատակներին ու մարտահրավերներին: Հայաստանում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման նախաձեռնությունը նշանավորում է կարևոր տեղաշարժ դեպի սոցիալական բարեկեցության առավել համապարփակ ու մարդակենտրոն մոտեցում:

Երկրորդ գլխի չորրորդ **«ՀՀ խորհրդարանական կուսակցությունների քաղաքական դիրքորոշումները սոցիալական քաղաքականության վերաբերյալ»** ենթագլխում ուսումնասիրվում են ութերորդ գումարման Ազգային ժողովում ներկայացված հիմնական քաղաքական ուժերի ծրագրերում սոցիալական քաղաքականության վերաբերյալ արտահայտված դիրքորոշումները ուշադրություն դարձնելով դրանցում առկա ընդհանրություններին և տարբերություններին: Ուսումնասիրվում են իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, ինչպես նաև ընդդիմադիր «Հայաստան» և «Պատիվ ունեմ» դաշինքների մոտեցումները սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ: Այս ենթագլխում նաև բացահայտվում են Միասնական սոցիալական ծառայության ստեղծման քաղաքական նախադրյալները:

Երկրորդ գլխի հինգերորդ ենթագլուխը վերնագրված **«Միասնական սոցիալական ծառայության դերը ՀՀ սոցիալական քաղաքականության շրջանակում»**, ներկայացնում է ՄՍԾ-ի դերը ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգում: Մանրամասն քննարկվում են ՄՍԾ-ի նկարագիրը, հաստատության կողմից տրամադրվող ծառայությունները,

կառուցվածքը, ինչպես նաև ֆինանսական ասպեկտները և գործունեության սահմանափակումները:

Ատենախոսության երրորդ գլուխը **«Միասնական սոցիալական ծառայության արդյունավետության գնահատում»** վերնագրով, հիմնականում նվիրված է ՄՍԾ-ի գործունեության արդյունավետության գնահատմանը: Այս գլխում գնահատվում է ՄՍԾ-ի տարածքային կենտրոնների Ընդունարանի, ինչպես նաև սոցիալական աշխատանքի ու զբաղվածության ծրագրերի արդյունավետությունը: Ի լրումն վերոնշյալի, ուսումնասիրվում են նաև ՄՍԾ-ի ինտեգրված տեղեկատվական համակարգի և մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության հիմնախնդիրները: Այս վերլուծությունների նպատակն է բացահայտել ՄՍԾ-ի գործունեության հիմնական թերությունները և առաջարկել լուծումներ դրանք հաղթահարելու համար՝ այդպիսով նպաստելով սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի արդյունավետության և հասանելիության բարձրացմանը:

Երրորդ գլխի առաջին **«Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի Ընդունարանի գործունեության արդյունավետության գնահատում»** ենթագլխում ներկայացվում են ՄՍԾ-ի Ընդունարանի գործունեության նկարագիրը և գործառույթները, ներառյալ դիմումների ընդունումը, խորհրդատվության և տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև Ընդունարանի արդյունավետությանը խոչընդոտող հիմնական խնդիրները, որոնք սահմանափակում են շահառուների կարիքներին ուղղված արագ և հասցեական ծառայությունների տրամադրումը:

Երրորդ գլխի երկրորդ **«Միասնական սոցիալական ծառայության սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի արդյունավետության գնահատում»** ենթագլխում ուսումնասիրվում են սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերը, դրանց արդյունավետությանը խոչընդոտող գործոնները: Զբաղվածության ծրագրերի արդյունավետությունը խաթարող գործոններից են զբաղվածության ոլորտում արդյունավետ մոտեցումների, խորհրդատվության և վերահսկողության բացակայությունը, ստվերային աշխատանքի առկայությունը, սոցիալական դեպքի վարման շրջանակում զբաղվածության արդյունավետ միջոցառումների պակասը, իսկ սոցիալական աշխատանքի տեսանկյունից դեպք վարողների համար ծանրաբեռնվածության թույլատրելի շեմի բացակայությունը, որակի վերահսկման կառուցակարգերի, ծախսագնահատման ու վիճակագրական տվյալների բացակայությունը, սոցիալական դեպք վարող անձանց թվի ոչ ճշգրիտ սահմանումը, անհատական ծրագրերի ու միջգերատեսչական համագործակցության ոչ արդյունավետ լինելը: Որպես լուծումներ

առաջարկվում են սոցիալական աշխատողների ծանրաբեռնվածության չեմի սահմանումը, ՄՄԾ-ում առկա սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի մասով ծառայությունների ինտեգրացիան, ինչպես նաև շահառուների հետ առավել հետևողական և համակարգված աշխատանքի կառուցակարգերի սահմանումը:

Երրորդ գլխի երրորդ **«Միասնական սոցիալական ծառայության ինտեգրված տեղեկատվական համակարգի արդյունավետության գնահատում»** ենթագլխում վեր են հանվել ինտեգրված տեղեկատվական համակարգի արդյունավետությանը խոչընդոտող գործոնները, մասնավորապես տեղեկատվության ինքնաշխատ փոխանակման բացակայությունը, տեխնիկական ցածր հագեցվածությունը, տեղեկատվական համակարգերի փոփոխությունների վերաբերյալ մեթոդական ցուցումների բացակայությունը, տեղեկատվական համակարգերի գործունեության որակի չափանիշների բացակայությունը, համացանցի դանդաղությունը: Որպես լուծում առաջարկվում է ներդնել միասնական տեղեկատվական համակարգը, որը կնպաստի գործառնական ծախսերի կրճատմանը և տեղեկատվության հասանելիության ու ճշգրտության բարելավմանը, ինչպես նաև թույլ կտա բարելավել հաշվետվողականությունն ու մշտադիտարկման կառուցակարգերը:

Երրորդ գլխի չորրորդ ենթագլուխը վերնագրված **«Միասնական սոցիալական ծառայությունում մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության գնահատում»**, ներկայացնում է անձնակազմի հավաքագրման գործընթացը և դրան խոչընդոտող գործոնները, օրինակ՝ ցածր վարձատրությունը, վարչարարական խոչընդոտները, հաստատության ոչ գրավիչ կերպարը ու կադրային բաժնի թերհամալրումը: Անդրադարձ է կատարվում նաև անձնակազմի կատարողականի գնահատման գործընթացին և դրան խոչընդոտող գործոններին, մասնավորապես կատարողականի առանցքային ցուցանիշների համակարգի ու հետադարձ կապի ինստիտուցիոնալացված կառուցակարգերի բացակայությանը, պարգևատրման անարդյունավետ համակարգին, կարիերայի առաջընթացի հնարավորությունների սահմանափակությանը և այլն: Որպես լուծումներ դիտարկվում են աշխատակիցների համար կատարողականի առանցքային ցուցանիշների սահմանումը, հետադարձ կապի տրամադրման կանոնավոր կառուցակարգերի նախագծումը, կատարողականի հիման վրա մրցակցային պարգևատրման համակարգի ներդրումը, ինչպես նաև մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների ընդլայնումը, որոնք կօգնեն նվազեցնել աշխատուժի հոսունությունը և ձևավորել երկարաժամկետ նվիրվածություն կառույցի նկատմամբ:

Ատենախոսության **«Եզրակացություն և առաջարկություններ»** բաժնում ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները.

1. **Ընդունարան**

   - ՄՄԾ-ի ընդունարանները, որպես շահառուների հետ փոխգործակցության առաջնային օղակ, հաճախ չեն ապահովում դիմումների գրանցման, վերլուծության և խորհրդատվության արդյունավետ ընթացքը։
   - Սահմանափակ ռեսուրսները և աշխատանքային գործընթացների խիստ տարբերակվածությունը դժվարացնում են շահառուների պահանջմունքների արագ և որակյալ բավարարումը։

2. **Սոցիալական աշխատանք**

   - Դեպքերի վարման համակարգի արդյունավետությունը ցածր է. աշխատակիցները չափազանց ծանրաբեռնված են, անհրաժեշտ ռեսուրսները բավարար չեն, իսկ աշխատանքի վերահսկման հստակ մեխանիզմները բացակայում են։
   - Անհատական աջակցությունը և միջգերատեսչական համագործակցությունը հաճախ ընդհատվում են, ինչը նվազեցնում է ծառայությունների ամբողջականությունն ու ազդեցությունը։

3. **Զբաղվածության ծրագրեր**

   - Զբաղվածության ծրագրերն ունեն գործառնական խափանումներ՝ կապված ստվերային աշխատաշուկայի հետ և չեն ապահովում սոցիալական աշխատանքի հետ արդյունավետ ինտեգրացիան։
   - Աշխատանքի շուկայի հետ շահառուների կապի ամրապնդման կառուցակարգերի բացակայությունը նվազեցնում է ծրագրերի արդյունավետությունը։

4. **Ինտեգրված տեղեկատվական համակարգ**

   - Տվյալների ինքնաշխատ փոխանակման բացակայությունը ՄՄԾ-ում երկարացնում է ծառայությունների տրամադրման ընթացքը՝ բացասաբար

անդրադառնալով հասցեականության և արդյունավետության վրա:

5. **Մարդկային ռեսուրսների կառավարում**

- Անձնակազմի հավաքագրման ոչ ճկուն կառուցակարգերը, վերապատրաստման հնարավորությունների պակասը և ոչ մրցակցային վարձատրության համակարգը նվազեցնում են աշխատակիցների մոտիվացիան և համակարգի արդյունավետությունը:

Վերհանված մարտահրավերները հաղթահարելու նպատակով ներկայացվում է առաջարկությունների համալիր փաթեթ նախատեսված ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացման համար.

1. **Ընդունարանի բարելավում**

- Մշակել ստանդարտացված ընթացակարգեր դիմումների ընդունման, գրանցման և խորհրդատվության տրամադրման համար:
- Ներդնել էլեկտրոնային տեղեկատվական հարթակներ, որոնք կաջակցեն փաստաթղթերի ինքնաշխատ փոխանակմանը, շահառուների պահանջմունքների արագ վերլուծությանը և հետադարձ կապի ապահովմանը:
- Ապահովել բարձրորակ տեխնիկական սարքավորումներ և գերարագ համացանցի հասանելիություն բոլոր ստորաբաժանումներում:

2. **Սոցիալական աշխատանքի բարելավում**

- Սահմանել դեպքի վարման ծանրաբեռնվածության ստանդարտ շեմ և ծառայությունների որակի մշտադիտարկման կառուցակարգեր:
- Վերանայել դեպքերի անհատական վարման մեթոդաբանությունը ապահովելով միջգերատեսչական համագործակցության ամրապնդում:
- Տեղայնացնել վերապատրաստման ծրագրերը հիմնված աշխատակիցների կարիքների վրա:

3. **Զբաղվածության ծրագրերի բարելավում**

- Մշակել խրախուսման կառուցակարգեր, որոնք կմեղմեն աշխատանքի անցնելու ֆինանսական դիմադրությունը:
- Ներդնել զբաղվածության ծրագրերի մասնակցության մշտադիտարկման համակարգ գործատուների հետ շարունակական համագործակցության հիման վրա:

4. **Ինտեգրված տեղեկատվական համակարգերի բարելավում**

- Ներդնել տվյալների փոխանակման ինքնաշխատ կառուցակարգեր, որոնք կհեշտացնեն տեղեկատվության հոսքը և կկրճատեն ծառայությունների տրամադրման ժամանակը:
- Ստեղծել տեխնիկական աջակցության հստակ համակարգեր ապահովելով արագ արձագանք տեխնիկական խնդիրներին:

5. **Մարդկային ռեսուրսների կառավարում**

- Վերանայել վարձատրության համակարգը բարձր որակավորում ունեցող մասնագետներին ներգրավելու նպատակով:
- Ներդնել կատարողականի պարբերական գնահատման կառուցակարգեր, որոնք կապահովեն պարգևատրման արդար և նպատակային համակարգ:
- Խթանել կարիերայի զարգացման ծրագրերը և աշխատակիցների վերապատրաստման գործընթացը:

**Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված հետևյալ գիտական հոդվածներում.**


1. **Aghajanyan M.** "The Problem of Social Protection Management in Armenia: Strategic Reforms for Integrated Service Delivery." Alternative Quarterly Academic Journal, 2024, № 3, pp. 80-88.
2. **Aghajanyan M.** "Navigating Social Protection: A Content Analysis of Core Definitions." Region and World, 2024, № 4 (53), pp. 135-140, DOI: 10.58587/18292437-2024.4-135.
3. **Aghajanyan M.** "Theorizing Social Protection: A Synthesis of Institutional, Interactionist and Holistic Perspectives." Region and World, 2024, № 6 (55), pp. 157-162, DOI: 10.58587/18292437-2024.6-157.

4. **Aghajanyan M.** "Digital Transformation as a Driver for Improving the Effectiveness of Integrated Social Services." Scientific Artsakh Journal, 2024, № 4 (23), pp. 73-83.
5. **Hambardzumyan V., and Aghajanyan M.** "Governance and Institutional Dynamics of Human Resources in Armenia's Unified Social Service: Recruitment and Performance Management Practices." Region and World, 2024, № 6 (55), pp. 222-229, DOI: 10.58587/18292437-2024.6-222.
6. **Hambardzumyan V., and Aghajanyan M.** "Integrated Information Systems in Social Services: Prospects for Reforming the Unified Social Service of Armenia." Alternative Quarterly Academic Journal, 2024, № 4, pp. 17-25.
7. **Aghajanyan M.** "Navigating Challenges in Armenia's Social Protection Sector: The Role and Reform of the Unified Social Service." Alternative Quarterly Academic Journal, 2024, № 4, pp. 117-130.

АГАДЖАНЯН МАРТИН АРМАНОВИЧ

# ПРЕДПОСЫЛКИ РЕФОРМИРОВАНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ СОЦИАЛЬНОЙ ПОЛИТИКИ В АРМЕНИИ: ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ЕДИНОЙ СОЦИАЛЬНОЙ СЛУЖБЫ РА В КАЧЕСТВЕ ОСНОВЫ РЕФОРМ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 "Политические институты и процессы". Защита диссертации состоится 21 мая 2025 г. в 14:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА (адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1).

## РЕЗЮМЕ

В диссертации рассматриваются пути совершенствования систем социальной защиты в свете современных геополитических и социально-экономических событий. Актуальность данного исследования обусловлена необходимостью оценки и реформирования Единой социальной службы (ЕСС) Армении с целью обеспечения её инклюзивности, эффективности и устойчивости. Несмотря на то, что правительство Армении предприняло усилия по реформированию системы социальной защиты, значительные проблемы на системном, управленческом и операционном уровнях продолжают препятствовать достижению заявленных целей.

Во введении обосновывается актуальность темы, определяются цели и объём исследования, а также формулируются теоретико-методологические основы, научная новизна, теоретическая и практическая значимость диссертации.

В первой главе «Теоретико-методологические основы социальной защиты» рассматриваются основные определения, цели, принципы и функции систем социальной защиты. В ней также сделана попытка интерпретировать концепцию социальной защиты с помощью соответствующих теорий, имеющихся в современной литературе, а также обсуждается важность централизованных структур в процессе предоставления социальных услуг и реализации политики.

Вторая глава «Обзор и стратегические реформы системы социальной защиты РА» представляет собой всесторонний анализ сектора социальной защиты Армении, раскрывающий его структуру, основные функции и стратегические реформы. Цель главы - проанализировать текущее состояние системы и представить текущие усилия по реформированию.

В третьей главе «Оценка эффективности Единой социальной службы» акцент переносится на анализ эффективности ЕСС с точки зрения факторов, препятствующих производительности, и практических улучшений. В ней подробно рассматриваются приёмное отделение, являющееся первой точкой взаимодействия с получателями услуг, программы социальной работы и трудоустройства, интегрированная информационная система и кадровые ресурсы.

AGHAJANYAN MARTIN ARMAN

# PRECONDITIONS FOR STATE SOCIAL POLICY REFORMS IN ARMENIA: ASSESSMENT OF THE EFFECTIVENESS OF THE RA UNIFIED SOCIAL SERVICE AS A BASIS FOR REFORMS

Dissertation under 23.00.02 "Political Institutions and Processes," aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on May 21, 2025, at 14:00 at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations" of the RA MoESCS HESC, operating at Yerevan State University (Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian).

## SUMMARY

The dissertation examines the ways through which social protection systems may be enhanced in light of contemporary geopolitical and socioeconomic events. The relevance of this research stems from the need to evaluate and reform Armenia's Unified Social Service (USS) to ensure it is inclusive, effective, and sustainable. Although the Government of Armenia has undertaken efforts to reform the social protection system, significant challenges at the systemic, managerial, and operational levels continue to impede the attainment of stated objectives.

The introduction establishes the relevance of the topic, defines the objectives and scope of the research, formulates the theoretical and methodological foundations, scientific novelty, and theoretical and practical significance of the dissertation.

The first chapter, "Theoretical and Methodological Foundations of Social Protection," examines the main definitions, objectives, principles, and functions of social protection systems. It also attempts to interpret the concept of social protection through the relevant theories available in contemporary literature and also discusses the importance of centralized structures in the process of providing social services and implementing policies.

The second chapter, "Overview and Strategic Reforms of the RA Social Protection System," provides a comprehensive analysis of Armenia's social protection sector, elucidating its structure, primary functions, and strategic reforms. The objective of the chapter is to dissect the current state of the system and present ongoing reform efforts.

The third chapter, "Effectiveness Assessment of Unified Social Service," shifts focus to analyzing the effectiveness of the USS with respect to the performance-inhibiting factors and the practical improvements. It scrutinizes the

Reception unit as the frontline contact point with the service recipients, Social Work and Employment Programs, the Integrated Information System, and Human Resources.